Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ

Պարոն խորհրդակից պաշտօնատարն ուսուցն 'ի կատարումն պաշտօնական գործողութեանց վաթայ ; 'ի նոյն ամի և խմն համարի պաշտօնախարութիւն. ուստի և ես փութացայ ըստ սովորական կարգադրութեան Ազգային Դպրոցաց Երևան քաղաքիս 'ի հարցաքննութեան հանդէս մտանել ուսումնական ընթացից աշակերտաց. և նախ յ31 մայիսի անցեալ զՕրիորդաց Դպրոցին Հայոց զաշակերտուհիս հարցափորձեալ 'ի ներկայութեան երեւելեաց քաղաքիս արանց և կանանց՝ գտայ զնոսա բաւական յառաջադէմ՝ յուսմանց՝ առաւել 'ի կրօնական առարկայս, յԱզգային պատմութիւնս, նաև յասեղնագործութիւնս. զորոց զուարճացեալ մեր և հանդիսատես ժողովոյ՝ մատուցաք զշնորհակալութիւն նոցա՝ նոյն իսկ օրիորդաց և աշխատասէր վարժուհեաց նոցա.

'Ի 5. 6 և յ7 ամսոյս հարցաքննեցաք զաշակերտս Եկեղեցական Դպրոցացն քաղաքիս՝ յորս նոյնպէս երևեցաւ ոչ սակաւ աշխատասիրութեան պտուղ և ջանք.

'Ի 10 և 11 ամսոյս հարցափորձեցաք զաշակերտս Թեմական Դպրոցի քաղաքիս 'ի ներկայութեան միայն ծնողաց և ազգականաց նոցին. յորոց ոմանք 'ի Կրօնագիտութեան յառաջադէմ, այլք յԱզգային պատմութեան, ոմանք յԱշխարհագրութեան և 'ի Թուաբանութեան, և միւսք յայլ և այլ ուսումնական առարկայս՝ 'ի նոյն իսկ Թեմական Դպրոցին աւանդեալս ըստ յԱրարատ ամսագրի տպագրեալ կանոնադրութեանն.

Բայց ըստ որում 'ի հաշուեկշռութենէ մտից և ծախուց դրամաւոր արդեանց Դպրոցին ըստ ժամանակին Տոմարին երևեցաւ, զի առ մինն յունվարի այսր 1870 ամի՝ ծախք Դպրոցին՝ որ է 1630 մնթ անցանէ քան զմուտս, որ է 1589 մանէթ. որով և կառավարութիւն Դպրոցին ոչ ըստ կարգի յառաջ ընթանայ յուսումնական առարկայս անդ և 'ի տնտեսական մասունս. ուստի և ժողովման միմիայն ծնողաց և ազգականաց ուսանողաց յայնժ՝ Թեմական Դպրոցին՝ յայտնեցի զանբաւականութիւն դրամական արդեանց գոյացելոց 'ի զանազան աղբերաց ընծայելոց 'ի Սինոդէ Ս. Էջմիածնի առ տնտեսական կառավարութիւն Թեմական Դպրոցին, և հրաւիրեցի զնոսա 'ի տարեկան թոշակատուութիւն՝ յիւրս կարգս բաժանեալ, այն է առաջինն՝ 10 ռուբլի, երկրորդն՝ 20 ռուբլի և երրորդն՝ 30 ռուբլի՝ առ այժմ ըստ կարողութեան խրախուսողացն.

Որոց կամօքն խոստացեալ յիրաւացի պահանջ մեր՝ հանձնեցին զայն առ զաւաձանել թոշակ աշակերտացն.

Ուստի և առ 'ի յարատևել զայս կարգ Դպրոցական՝ խորհրդով վարժապետաց՝ կանոնադրութեամբ սահմանեցաք զ15 յօդուածով կանոնս, զոր և արդ գործադրեմք իսկ անթերի.

Զայսպիսի կանոնական հրաւիրագիրս առաքելով . . . Նախագահութեանդ՝ խնդրեմ՝ տպագրութեամբ յեզս պատուական ամսագրոյդ հրատարակել 'ի լոյս միտողինս, և մանաւանդ այնոցիկ որք կարօտին ցանկան յառաջադիմութեանց երջանկութեան Հայորդւոց, առաւել այնու հարկեցուցիչ առթիւ, զի ամենայն որ ծանիցէ թէ՝ և Հայ հասարակութիւն Երևան քաղաքի քաջ զգալով զանյագ պարտականութիւն իւր ըստ փառաւոր օրինակի խոհական Հայկազանց բնակելոց յԱգուլիս գեղջ Գողթան հռչակաւոր գաւառի փութայ խրախոյսն հանգանակութեամբ նշանաւոր կոչուցանել յաշխարհի զաւուն Ազգային յառաջադիմութեան՝ զՈւսումնարանն անուն Թեմական. որով և 'ի հրապարակ ընդհանուր մարդկութեան զիմաստութեան մայրն՝ հետամուտ աշակերտութեան պատրաստելով՝ հանեալ՝ առաջի առնել՝ որոց 'ի ժողով լուսաւորեալ Սանին զամարեալ արամն քաղաքակիրթ մարդկութեան հանրաշահ և առանձին Ազգաշահ գեղեցիկ արդասեայն, և այնպէս հագեալս մխիթարել և պարծել յաւիտեան.

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ·

յԵրևան.

## ՀՐԱՒԷՐ

### Առ Հայազգի Երևանայ 'ի փոխանորդէ Թեմականին նորին Մեսրոպ Վարդապետէ Սմբատեանց 'ի 1 մայիսի 1870 ամ. յԵրևան.

Որպէս քանիցս անգամ՝ մեր ականջն է հասած՝ կարելի է ասել ձեզանից շատերը նոյնպէս լսած կը լինին անդ անդ ժողովելի այս իրաւացի գանգա-